

ՊԱՏՄԱՆԻ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Տեղամասայ 6 «

ԱՐՏԱՍՈՒՆՈՒՆ
2 ք/մ մեկ ծրարով
Տարեկան 14 ֆր.
Տեղամասայ 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տղ.
Վեցամասայ 1.50 »

ԿԱՆԻՍԻԿ

Մանուկան տղր
20 ամսիս



ԼՐԱԳԻՐ

ԱՂԳԱՅԻՆ ԵՐ ՔԱՂԱՔԱՅԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ

ՀԱՐԱԹ

Rédaction du journal

„Iraounk“

(A R N A (Bulgarie)

— o —

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

— o —

Գրասրահիս

չկն տրաիր

ԺԵՕՆ ԹՈՒՐԲԵՐԸ

Մեր նախորդ թիւով հրատա-
րակեցինք Մ. խալիկանէմի «Ե-
րպայի հակաշինքը թուրքիոյ
մէջ» վերնագրով մէկ յօդուածը,
որ հրատարակուած էր Մէլլէրէի
մէջ իր առաջնորդող, եթէ այդ
յօդուածը ստորագրած ըլլար Սի-
մէտ Բիզան, զանի մեր թերթին
մէջ արտատպելու աստիճան կա-
րելու թիւն չի պիտի տայինք,
գիտնալով ժէօն թուրքերու այդ
ինքնակոչ պիտին հակահայ ըն-
թացքը. բայց Մ. խալիկանէմ
տակաւին մեզ զգուցեցելու աստի-
ճան իր գոյնը գործն չէ տուած,
ուստի յայտնած կարծիքները կար-
ծենք մի քիչ ուսումնասիրել:

Յօդուածագիրը իր արտայայ-
տած գաղափարներու ընթացքին
մէջ շատ մը ճշմարտութիւններու
հետ սխալներ ալ սպրդեցուցած է,
որոնց գլխաւորներէ մին է այն
ճշմարտութեան ուրացումը թէ կրէ-
տացիք և լիբանանցիք ոչ մի ա-
ռաւելութիւն ընձեռած չըլլան ի-
րենց ստացած ինքնավարութիւն-
ովը. ակնյայտի իրողութիւն մը
այս աստիճան ուրանալ յօդուա-
ծագիրին անկեղծ հայրենասիրու-
թիւնը թէեւ կասկածի կեն-
թարկէ. բայց մեք անցնինք այս
կէտը:

Յօդուածին է՛ն կարեւոր մասը
սա է թէ, Մ. խալիկանէմ փառ-
տելով որ պետութիւնը իրենց շա-
հագործումին համար անհամաձայն
կը գտնուին Հայոց և Մակեդո-
նացոց խնդիրները կարգադրելու,
կառավարէ թէ, մեք, Օսմանեան
հպատակներս, մեր գլխուն ճարը
նայելու համար, «նախ հայրենի-
քի աղէկութիւնը նպատակ ունե-
ցող ընդհանուր ծրագրի մը վրայ
համաձայնելու սխիւք, ու յետոյ
մեզ բաժնող միւս երկրորդական
խնդիրներու վրայ վիճինք»:

Նախ Հայոց և Մակեդոնացոց
մասին խօսելով, ասոնք արդէն ի-
րենց միմիկումն ծրագրի մը ճշգ-
ծ են, որ ներքին ինքնավարութեան
պնդին չի անցնիր, ինչ որ քաղա-
քակրթեալ շատ մը մեծ պետու-
թեանց ու ազգերու ընդունած և

գործադրութեան դրած վարչա-
կան եղանակն է. օրինակ՝ Ամերի-
կայի Միացեալ Նահանգները, անգ-
լիական շատ մը երկիրները, Դեր-
մանիոյ և Աստրիոյ կայսրութիւն-
ները Ասոնք ամէնն ալ այնպէս
էն յառաջագէտ ազգերը կը ներ-
կայացնեն. Այդ ի՞նչ ծրագրի կը
սպասէ մեզմէ երբեմնի երեսփո-
խան խալիկանէմը. այսինքն ին-
չո՞ւ կառչած կը մնան Միտհատ
բաշայի մը թաղուած սոհմանագ-
րութեանը առջին:

Օսմ, կայսրութեան քրիստոնեայ
և իսլամ հպատակներս քանի որ
համոզուած ենք թէ օտար պե-
տութիւնք մեր հայրենիքը՝ բա-
րենիքուղծի պատրուակին տակ
իրենց շահագործումին սպառել
կընեն, ի՞նչու մեք ինքնաբերա-
բար, առանց օտարին միջամտու-
թեան, չենք ելնել այդ բարե-
նորոգումները իրագործելու միտ-
ձեռքով. Ո՛րչո՞ւ կը սխալի Մ.
խալիկանէմ երբ կըսէ թէ պե-
տութիւններն են պատճառ բարե-
նորոգմանց չգործադրուելուն. Ե-
տ ճիշդ պիտի ըլլար եթէ ըսէր թէ
բուն իսկ թուրքերը, և հայրենա-
սէր կարծուած ժէօն թուրքերը
պատճառ են թէ բարենորոգմանց
չ' գործադրուելուն և թէ երկրին
մասնաւոր օտար պետութիւններէ
գրաւուելուն:

Մեր տնտեսականութիւնը իրօք
ծանր պիտի լիուի ժէօն թուրքե-
քուն, բայց դժբաղդեպէս ճշմար-
տութիւն է. Մ. խալիկանէմ իր
բերանովը կըսէ թէ «23 տարիէ
ի վեր ընդունայն մեր կողմէն
1876ի սահմանադրութիւնը պա-
հանչեցինք. մեր պահանջներուն
յաջողութիւնը միտքեմք և հա-
մաձայնութեամբ կարելի պիտի ըլ-
լար»:

Քրիստոնէից հետ այդ մի-
տքութիւնը յառաջ բերելու համար
ինչ համակրելի ընթացք ունեցան
ժէօն թուրքերը, բացի՝ իրենց
ազգակիցներու արինհեղութիւն-
ներուն ի տես՝ ուսերնին վեր վեր-
ցնելէ. իրենք իբրեւ գաղափարի
մը զինուորներ ո՞ր կէտի վրայ
կառուցան ըսցի արտասահմանի
մէջ թուրքեր մտնելէ: Մինչեւ
այսօր Ֆրանսերէն Մէլլէրէիք ի՞նչ
քանի համար գոյութիւն ունի, և

թէ ոչ օտարի միջամտութիւնը
ինչպիսի թուրքիոյ ներքին գոր-
ծերուն, այսինքն Երպային
հրախրելու որ գայ Ապոլի-Հա-
միտը գահընկէց ընէ ու ետ քա-
շուի: Մէլլէրէի խմբակը պէտք
է սա համոզուած ունենայ թէ, ե-
թէ ժէօն թուրքերը քիչ մը ալ
յապաղին Հայոց ու Մակեդոնաց-
ոց ներքին ինքնավարութիւն տա-
լու պարտականութիւնը ճանչնա-
լու, ու շարունակեն իրենց անի-
մաստ խօսքի-հերոսութիւնը, գի-
տակցաբար օսմանեան երկիրնե-
րուն բռնաճնշուած պիտի փութաց-
նեն: Այդ դժբաղդ պարագային
եթէ մեր կուրսուոր հինգ ըլլայ
իրենց տասը պիտի լինի. եթէ
մեք վիրաւորինք իրենք մեռած
պիտի գտնուին:

Գոռպէք

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՆՑՈՒՂՄԱՐԶ

1901 տարւոյն մէջ

Յրանսայի արդի Գ. հանրապե-
տութեան շրջանին գրեթէ եզա-
կան եղաւ վալտէք Ռուսոյի նա-
խարարութիւնը, որ երեք տարի
անընդհատ կեանք մը ունեցաւ և
կերեւայ թէ տակաւին պիտի ապրի:
Արդի կորովի վարչապետը կրցաւ,
Տրէյֆիւսի անօրինակ դատէն վերջ,
որ օւղէտեան և այլ հակահանրա-
պետական կուսակցութեանց էնթ-
րիքներուն ապստամբարէք տուած
էր, հանրապետութիւնը ներք-
նապէս աւելի հաստատուն հիմ-
քով վրայ զետեղել և թէ Յրան-
սայի արտաքին քաղաքականու-
թիւնը զօրացնել, Ռուսիոյ հետ
զինակցութեան կապերը ամրա-
պնդելով, սրուն ապացոյցն է Չարին
և Չարուհիին Յրանսա այցելելը:
Մինչդեռ ասորին Երեւակ նիգա-
կակցութիւնը տկարացաւ, Յրան-
սայի և իտալիոյ միջեւ գոյացած
համաձայնութեամբ-որով շատ լաւ
կը մեկնուի վալտէք Ռուսոյի
ճկունութիւնը—Գերմանիոյ մաք-
սային նոր ծրագրին և վերջին ա-
միսներու մէջ ալ Բրուսիոյ մէջ

Լեհերու հալածման պատճառնե-
րով, Մանաւանդ վալտէք Ռուսո-
յի դահլիճը արտաքին քաղաքա-
կանութեան մէջ խօսելէ աւելի
գործելու յաւակութիւն ունենալը
ապացոյց Միտքիլի գրաւման մի-
ջադեպովը, որուն արդիւնքն հղաւ
Արեւելքի մէջ տասնեակ տարինե-
րէ ի վեր տկարացած Ֆրանսական
ազգեցութեան նոր նշանակու-
թիւն մը ստանալը. և ալ աւելին
պիտի ստանար, եթէ Մ. Տէլքա-
սէ մի քիչ կորովամտութիւն ալ ու-
նենար իր պահանջներու ցանկին
կցելու Հայոց վիճակին բարեփոխ-
ման առաջարկն ալ, զոր երեսփո-
խողին մէջ չկրնալ պաշտպանե-
լու վախը բնաւ չունէր. մինչդեռ
Հայոց մասին ու է առաջարկ չի
ներկայացուցած նաւաբաժինը ետ
կանչելը զինք ամօթահար ըրաւ,
խորհրդարանին մէջ երեսփոխան-
ներուն մեծամասնութիւնէն հակա-
ռակ քուէ ստանալով. այնպէս որ
քիչ մնաց նախարարական տազ-
նապ ծագէր. բայց նախարարա-
պետ վալտէք Ռուսո իրեն յա-
տուկ կորովովը վստահութեան
քուէ առաջարկելով, կրցաւ փրկ-
կել Դահլիճը: Սակայն այս ամէ-
նը ցոյց տուին թէ քաղաքակր-
թիւն և մարդասէր հին Յրանսան
չէ այլասեռուած, ինչպէս կը կար-
ծուէր Հանօթօյի ատեն, և հաս-
տատ յոյս ներշնչեցին թէ Յրան-
սա կրկին՝ դրազանց սպէս մար-
դասիրական ու քաղաքակրթա-
կան հայկական խնդրին լուծման
կարապետողը պիտի ըլլայ, ինչ-
պէս եղաւ Յունաստանի, Լիբա-
նանի և Կրէտէի համար:

Վերջացող տարւոյն մէջ եթէ
ըսենք. Գերմանիան տէքստաւանի
շրջան մը բոլորից, արդեօք սխա-
լած կրկնեք. Երկրին մէջ տի-
րող տնտեսական տառնապը ամ-
բողջ տարւոյն տնտեսական մէջ
հոյակապ առեւտրական տուններու
յաջորդական սնանկութիւններ ա-
ռաջ բերաւ. գործարաններէ շա-
տեր գործելէ դուրսեցան կամ ի-
րենց գործաւորներու թիւը պակ-
սեցուցին, որով հարկեր հազարա-

ւոր անգրադ բազմակնեքու խեղճ
վիճակը կուսակցութեան մտածանքն
ընթերցանելու պատճառով Գիտնական
տոգրագր մի քիչ բարեփոխուեալ
պատկառ պատրաստուած մար-
տիրի նոր սակագրով աւարտա-
քին գծարարութեան ներքին առիթ
տուաւ. գլխաւորապէս Ռուսիոյ
գծագրութեան պատճառով զտա-
ղինակից Աւստրիոյի ալ աւելի
անհաճոյ թուեցաւ. Այս վեր-
ջինը սակագրոյցէն գծագրական
շատ զօրաւոր պատճառներ ունի
քան ուրիշ ունի պատմութեան մա-
նաւանդ երբ նկատենք անոր Գեր-
մանիոյ գրաւոր և զինակից պատմ-
ութիւն մը բոլորով հանգիստ իր
ապրանքներուն առջեւ Գերմանիոյ
հրապարակին գոցութիւնը. Այս վեր-
ջինը հասաւ Լեհական խորհրդին
այլ, որ Աւստրիոյ շատ մը պատմ-
կան մարգար, մանաւանդ ազգա-
լեհ կամ կողմնակիցի ջիգերը
գրաւեց, ու սկսաւ երկու գինե-
կից կուսակցութեանց միջև բա-
րեկամութիւնը կասկածելի ընող
խօսքեր փոխանակուիլ. Կողմնակից
ընդհ. ժողովը յայտնի համարած և
Գերմանիոյ գէտ յարձակում ըրաւ.
Գերման վարչապետ կոմս Պիլկու-
կոլուսովսքիէն պահանջեց Աւս-
տրիոյ մէջ հակագերման հաստիքին
առջեւ առնել, և ինչպես Լե-
հերու հանգանակութիւնը արգի-
լել. Կողմնակիցի «չ կարենք»
պատասխանեց, յիշեցնելով Գեր-
մանիոյ միեւնոյն պատասխանը
ատենաք կաթողիկոսութեան գէտ
սկսած հոսանքի մը առթիւ, ո-
րուն գէտ Աւստրիա բողոքած էր.
Վերջապէս երկու մեծ գինե-
կիցներուն յարաբերութեանց այս
բան պող վիճակին կցուելով ֆը-
րանսէիտական համաձայնութիւնն
ալ, Երեւակ Զինակցութեան շնոր-
հիւ Գերմանիոյ գերակշիռ դիրքը
միջազգային կաղաքականութեան
մէջ լախուսեցաւ. իսկ վերջերս
Աւգրիոյ հետ ալ Գերմանիոյ յա-
րաբերութիւնները յետոցան, ո-
րուն առիթ տուաւ պօքրական պա-
տերազմը. Գերման թերթերու յար-
ձակումները, անգլիական բանա-
կին հարաւ. Աւգրիկէի մէջ գործած
խաղաղութեանց առթիւ, հարկադ-
րեցին Մ. Չեմպլընը որ իշխեց-
նէ 1870ի Գերմաններու գործած
վարագրութիւնները. Գաղղիացի
գէտ. և ահա բանավեճի փոխա-
սացութիւնը սչօաւ երկու կողմէն.
Բայց այս ամէնի հետ Գերման
վարչութիւնը տեսնենան հաստա-
տածութեամբ իր որոշածն մաս
մը չի վերջեր. մարտիին նոր սա-
կագրոյցը Ռախտակին կը ինք-
կայացնէ նոյնութեամբ, Պիլկու-
կոլուսովսքիէն կը յայտարարէ թէ
Լեհերուն հետ աւելի խիստ պիտի
վարուի, ի թէ կառավարութեան
կամքին համակերպիլ չուզեն, եւն.
և միեւնոյն ատեն Եւրոպայի մէջ
կորսնցուցած բարեկամութիւնները
առայած Ամերիկայի մէջ գտնե-
լու կը ձգտի ու Միացեալ Նահան-

գաց հետ մտերմութիւններ կը մը-
շակէ, Հանրի՛՛՛ իշխանը զրկելով.
Միւս կողմէ ալ Աւգրիոյ գոհ-
ժառանգը Գերմանիոյ կայացիւ.
բայց այս այցելութեան աւելի ըն-
տենեկան գոյն կը տրուի.
3. 9.

ԲԱՑ ՆԱՍՍԱ

ՊՐ. ԴԵՍ ՈՒ ԴԵՆԻ

Շատ հետաքրքրութեամբ կարգա-
կեր Ուլի Եւեմ յանցաւորը խորագրով
յօգուածը Իրաւունքի շրջ. և 3րդ.
թիւերուն մէջ.

Ձեր այդ յօդուածով մեր հար-
կանքը գէտի հայրենիքի ազատութեան
գործը ցոյց տուած անտարբերութիւնը
ձողկելէ վերջ. Եւսմ ծանրացած էք
յիշատիւականներուն վրայ. և այս
վերջինները իբր ամեն յանցաւոր
մասնանիշ կ'ընէք.

Ներքեք որ ձեզ հրապարակաւ հար-
ցնեմ թէ ի՞նչ ընէ այն յիշատիւ-
կանը կամ յիշատիւական կուսակցու-
թիւնը, երբ այդ հայ հարուստը իր
ներկան ապահոված, չի հետաքրք-
րուի մայր հայրենիքի մէջ տանջ-
ուող իր արիւնակիցներուն դառն վի-
ճակով. ի՞նչ ընէ յիշատիւականը,
երբ հայ հարուստը և ժողովուրդին
մեծագոյն մասը (Ձեր վրայ վստահու-
թիւն չունինք) խօսքով մը անոնց
գիտմանը ու ճանաչելիքները կը վի-
ժեցնեն. ի՞նչ ընէ յիշատիւականը, երբ
հարուստը մասնաւորին յանցանքը
ընդհանուրին վերագրելով, քանի մը
խաչագողը արաբը պատրուակ կը
բռնէ ու գրած չի տար. որովհետեւ
իր գործին այսպէս կուգայ. Երբեք
կրնա՞ք ցոյց աւել հարուստներ որոնք
իրենց հանգիստը գտնելով նետուիլ
ուզեն գործին մէջ ու յիշատիւական-
ները իրենց չուրջ հաւաքելով, ժո-
ղովուրդին իրականութեան և բարոյակա-
նութեան իրականութեանը ու քաղաք-
ականութեան իրականութեանը
արժանայնեան թէ՛ գործը և թէ՛ գոր-
ծիչը.

Կրնա՞ք պատի ըսէք թէ յիշատիւ-
կանները ցարդ չեն ուզած հայ հա-
րուստին կամ ժողովրդականութիւն
ունեցող անձնաւորութեանց հետ գործ
ունենալ, վախճալով որ գործին զեկը
իրենց ձեռքէն ելնէ. Բայց այս ա-
ռարկութիւնը ալ անտեղի է, երբ
Հնչ. կեդրոնը բացէ ի բաց յայտա-
բարեց թէ իրենք պատրաստ են գոր-
ծէ քաղաքի, և ամեն բան գոհել ի
սէր միտ թեան. Կոնէ՛ այս պարագա-
յին ո՞ր հարուստը ելաւ ու յայտարա-
րեց թէ ինք պատրաստ է գործին ա-
ջակցելու, երբ այսինքն անձի խնդիր
չէր մնար.

Խնդրեմ հաճեցէք ցոյց տալ թէ ի՞նչ
ընել պէտք է հարուստն ալ հատարակ
ժողովուրդն ալ միատեղ առնելու և
գործը ազդուիլն յառաջ տանելու հա-
մար.

ԵՐՈՍ

Ս. ԲԱՂԱՔԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԽՈՒՍԲ

Սիրելի հայրենիք.

Ներքեք կը զրկենք ձեզի, «Հայկա-
կան Մասնախոսք» կազմակերպ մի կա-
նոնագիրը. խնդրելով, որ հաճեք
զայն հրատարակել Իրաւունքի մէջ.
Հայրենիքի հակայական զթաղու-
թիւնը, և ազգային կորստեան մե-

ծագոյն վտանգը հաւաքանք խոր վէր-
քեր բացած են ամէն հայ սրտին մէջ.
և ազգային խիղճը չարաչար կը
տանջէ զինքը. եթէ ամեն հայ իր կա-
րողութեան չափով հայրենիքի ազա-
տութեան գործին չը սատարէ և երկար
սպասու մէ և փոխառութեան վերջ,
արդի կազմակերպութեանց կուսակ-
ցական բնութիւնը, և անբաւարար
գործունէութիւնը իկտախ ունենալով,
պատշաճ գոտեցիւք «Տեղական Հայ-
կական Մասնախոսք» մը կազմել,
զաղափարակից ու համոզուած ընկեր-
ներով. թէպէտ թուով քիչ առ քիչ,
սակայն գիտակից իր պարտականու-
թեանը, տակաւ ընդհանրացնելով կա-
նոնագրիս մտքերը ու նպատակը
չապցնել ինկերներ թիւը. Համոզ-
ուած ըլլալով, որ ուրիշ քաղաքներ
մէջ ալ գոյութիւն ունին մեզ նման
մտածողների խմբեր, ներկայս հրա-
տարակելով, արդի մը տուած կըլլաք
միմեանց հետ յարաբերութիւն հաս-
տատելու.

Ընդունեցէք սիրելի հայրենակից մեր
յարգանաց հետ և շնորհակալեցնելով.
Ի գիտաց Հայկ. Մասնախոսքիս
Ստորագրութիւն
Ս. Բաղաք, 15 Յունուար 1903

Կանոնագիր

Ազգային նուիրական գոտին պաշտ-
պանութեանը համար կազմուած յեզա-
փոխական կուսակցութեանց իրարու
ներհակ ու անհամբարաչի գործունէու-
թիւնէն՝ ազգին կարող ու զգացող
մասը գործէն չէզոքացած ու ազգային
դասին ալ ուղղակի անոնց գործու-
նէութիւնէն օգտուելու հանգամանքէն
զրկուած ըլլալով նկատի ունենալով՝
գոյութիւն ստացած է Հայկական Մաս-
նախոսք. որ իր նպատակն ընտրած
է Ազգային ուղղութեան, ու հայրե-
նիքի շահերին լայնօրէն համապատաս-
խանող պատասխանատու կազմակեր-
պութիւն մը առաջ բերելու մասնակ-
ցիլ իր բարոյական ու նիւթական մի-
ջոցներով.

1. Մասնախոսքի կրնան անդամակ-
ցիլ գործադիր մարմին հաւանութիւն
նով տեղացի ազգայիններէն անոնք,
որոնք ազգային պարտաւնասանութեան
ոգին, ու յեղափոխութեան պէտքը
բաւականաչափ զգացած ու հասկցած
ըլլան. որով միայն տեւական և օգ-
տակար կրնայ դառնալ իրենց գոր-
ծակցութիւնը. (1)

2. Մասնախոսքի անդամակցող ազ-
գայինները պարտաւոր են իբր մուտք
վճարել (5) հիւր ֆրանք.

(1) Այս խօսքը ցոյց կուտայ թէ ազ-
գին ցրուցան ուժեղ միացած տես-
նելով բաղձանքով, ասկէ առաջ կազ-
մուած միութեանական խումբերու նը-
պատակին կը համապատասխանէ Ս.
քաղաքի Հայկական մասնախոսքի
նպատակն ալ. Ինչպէս որ ինչ ա-
ռիթներու մէջ եւս ըսած ենք, այս
նպատակաւ խումբեր կազմուելը բաղ-
ձալեալ ընդհանուր միութեան գործը
կը զիւրացնէ կը կարծենք. ուստի
օրինակելի կը գտնենք Ս. քաղաքի
մասնախոսքը. միայն կը յանձնա-
րարենք որ Միութիւնը փութիւն ցնելու
նպատակաւ գոյութիւն առած բոլոր
խումբերը իրարու հետ անոնցութիւն
հաստատել ջանան և կարծեաք փո-
խանակութիւններով իրենց մէջ հա-
մաձայնութիւն գոյացնեն ընդհանուր
միութեան համար ձեռք առնուելիք
միջոցներուն նկատմամբ.

Ե. Խ.

3. Մասնախոսքի կրնան նա իր գոր-
ծադիր մարմինը. Ատենապետ մը,
Քարտուղար մը և Գանձապահ մը.

4. Մասնախոսքի կրնան նա մի գան-
ձապահ, «Ս. Քաղաքի Հայկական
Մասնախոսք» վարտառութիւնով, որ
կը կնքուի Քարտուղարի կնիքով, ու
կը պահուի գանձապահի մօտ.

5. Իւրաքանչիւր անգամ պարտաւոր
է իր շրջանակին մէջ ազգային գաւառի
օգնելու պարտականութիւնը զգացնել
տալ, և միեւնոյն ժամանակ զանա-
գան խմբերի պատկանող ազգային-
ներին հետ համարաչիօրէն վարուելու
անհրաժեշտութիւնը ազդել. և ինքն
ալ մասնախոսքին մէջ կրտսրական
զեր չը կատարելու համար, իր կար-
գին գանձապահը անդամակցիներուն
ներկայացնել չաքալ մի անգամ,
ստանալու անոնց նուէրները՝ որոնք
իրը անդամակցութեան վճարատուրք
պիտի նկատուին. ու գանձապահը
նոյն օր գանձապահին յանձնել.

6. Կանձապահը ամիսը մի անգամ
կը բացուի գործադիր մարմինի ներ-
կայութեանը, ու գոյացած հարցերը
կարձանագրուի գանձապահի հաշուե-
ստորին մէջ, որն պարտաւոր է յանձ-
նել քօսթի վարչութեան.

7. Մասնախոսքի կրնան նա քօսթի
լիւրի տետր մը, Ատենապետի անու-
նով առնուած. որի մէջ կարձա-
նագրուի ամսական հարցերը.

8. Ատենապետը մի գործիւնով կը
յայտարարէ, որ սոյն տետրը Ս. Քա-
ղաքի Հայկական Մասնախոսքին կը
պատկանի. այդ գիրքը գանձապահի
մօտ կը մնայ.

9. Մասնախոսքի կրնան նա տարե-
կան րհհանուր ժողովներ գործադիր
մարմին ընտրութիւնը կատարելու.

10. Մասնախոսքի գործերը առօա-
մայէս կը վարեն հիմնադիր անգամ-
ները, հաւանութեամբ միւս անգամ-
ներին.

11. Ընտրելու իրաւունք կուենան
21 տարին իսկ ընտրուելու գործադիր
մարմին անդամակցելու իրաւունք 30
տարին յաջորդ անգամները.

12. Մասնախոսքի գոյութեան
կուենան ազգային գաւառի վրայ գա-
ղափարներ փոխանակելու.

13. Մասնախոսքի գոյ յայտնելով
կազմակերպութեան միջեւ համարաչ-
իութիւնը ազգային գաւառի անհրա-
ժեշտ նկատելով, յարաբերութիւններ
կը մշակէ ի հարկին նոյն կազմակեր-
պութեանց, ինչպէս և զանազան
գործիչների հետ.

14. Մասնախոսքի թղթակցու-
թեանց, ճամբորդութեանց և ազ-
գային մարմին մը կամ գործիչի մը
օգնելու համար, միշտ իր նպատակի
իրագործմանը համար, կրնայ իր տա-
րեկան հատկութիւն 0/0 50) միայն ծախ-
սել. իսկ մնացածը իբր պահեստի գո-
մար քօսթի վարչութեան միջոցաւ
չահարելու.

15. Մասնախոսքի իր գոյութիւնը
հրապարակելով, հրաւեր կը կարգայ
օգտու երկիրների մէջ կազմուած հա-
մանման մասնախոսքներին իր հետ յա-
րաբերութեան մօտեցում, սակայն ան-
ժանօթ անունների հանդէպ զգուշու-
թիւն իրեն կը վերապահէ մինչեւ
սոյն տեղեկութիւններ ստանայ ա-
նոնց մասին, գործին փափուկ և
նուիրական հանգամանք միշտ բարձր
պահելու համար.

16. Առօրինակ հանգամանք ունե-
ցող մասնախոսքի կը զգալի գոյու-
թիւն ունենալէ, երբ համայն ազգի
բաղձանաց ու պահանջների համա-
ձայն, առաջ կուգայ այն պատասխա-
նատու կազմակերպութիւնը, որ իր
մէջ գոյացած բարոյական, նիւթական

ու մտաւոր ուժերովը ամբողջ ազգին վստահութիւնն ներշնչէ, որով եւ պետութեանց ստիւնը հայ ազգի պաշտօնական կամքը ներկայացնէ. եւ ինչպէս մայր հայրենիքի նուիրական շահերին, նոյնպէս արտասահմանի հայ գաղթականութեանց պէտքերի գոհացում տալու կարողութիւնն ու լայն միջոցները ընձեռէ. այն ատեն եւ մասնախումբը իր ամեն ուժերը միացնելով սոյն պաշտօնական մարմինն, կը համակերպի անոր գծերը կանոնադրի արամադրութեանցը:

17. Մասնախումբս՝ ինչպէս անց իր նպատակը իրագործելու հարկեցուցիչ պատճառաւ մը զարդի գոյութիւնն ու ներառէ իր ունեցած գոյք, զբաւ կը յանձնուին Ս. Գաղաթի հայ եկեղեցւոյն Պատ. Թաղականութեան, իբր անդակուն հանգամանք ունեցող հասոյթ մը:

1 Յունուար 1902

ԾԱՆՈԹ. — Մասնախումբս՝ ընկերութեան մը բնութիւնը չունենալով, պաշտօնական կնիք չունի. եւ ամեն վեցամսեայ գումարման մէջ մասնախումբիս իբր պաշտօնական ստորագրութիւն եւ հասցէն ծածկանուն մը պիտի որոշուի:

ԳՈՅՈՒԹԱՆ ԻՐԱՆԻՆԻՔԸ

ԵՒ

ԳՈՐԾԵԼՈՒ ԻՐԱՆԻՆԻՔԸ

Այս երկու իրաւաբանական կէտերը չարաչար սխալ հասկցուած են հանրային գործերու նկատմամբ, թէ՛ մասին թէ՛ ժողովրդէն, որուն արդիւնքը նաեւ կրկնայայտման բարեկրօնական խառնակութիւններ թէ՛ մակոյն թէ՛ ժողովրդին մէջ:

Մասնախումբս քարոզելով և պաշտպանելով գիտութեան օգտակար նպատակը, այսինքն ճշմարտութիւնը և արդարութիւնը, հետեւաբար կը քարոզէ և կը պաշտպանէ ժողովրդին իրաւունքները և շահերը. ահա մամոյ նշանակութեան մեծութիւնը, որմէ կը պահանջուի գիտակցութիւնն որպէս զի չը դառնայ պատուհաս ժողովրդի գլխին:

Ժողովրդին համար առաջադրուած նպատակի մը բացարձակ տէրը ժողովուրդն է. իսկ պարզութիւնը առժամայէս կը վստահուի վարչական մարմնոյ մը, որ կրնորուի մշտապէս ժողովրդին քուէարկութեամբ. հետեւաբար, վարիչները կրկնապարզապէս ժողովրդի կամքը գործադրողներ և անոր ճիշդ գործադրութեանը համար նաեւ պատասխանատու են ժողովրդին առջեւ:

Ահա այսպէս կունենան հանրային հաստատութիւնները իրենց գոյնընդուն իրաւունքը և վարիչները իրենց գործնալի իրաւունքը: Այս արեւափայլ ճշմարտութիւնը այլապէս հասկցուելով, գոյախտաբար, ժողովուրդը չարաչար կը տուժէ... իր իրաւունքները և շահերը բռնաբարոյն շահագործութիւններէ:

Սահմանադրական աղատ երկիրներու մէջ ապրող հայերը կր տեսնեն

նեն թէ իրենց իրաւունքն իր բոլոր նախնիներէն կը զանաւոր իրենց բնական սահմանադրական ազատ երկիրներու մէջ իսկ. բայց այս անգամ բռնաբարոյն կը թուրքեր չեն, այլ անբացատրելի հայեր: Ըսել է թէ Հայոց մահացու թըշնամին եթէ թուրքն է թուրքոյ մէջ, արտասահմանի մէջ ալ թրքացած հայն է: Ուստի հայ պէտք է կռուի թէ՛ թուրքներուն դէմ որ կը բռնաբարեն հայոց իրաւունքները, թէ՛ հայերուն դէմ որ նմանապէս կը բռնաբարեն արտասահմանի մէջ: Ըսել է թէ հայերը ոչ միայն բռնապետական թուրքոյ մէջ պիտի կռուին ուր կը տառապի հայութիւնը, այլ նմանապէս պիտի կռուին սահմանադրական ազատ երկիրներու մէջ, ուր հայ գաղթականութիւնները առդէն կը վայելեն սահմանադրական ազատութիւն:

— Այո՛, ժողովուրդը կը դատապարտէ և պիտի դատապարտէ իր իրաւունքները բռնաբարողը, բլան անսփ թուրք, բլան հայ: ԱՎԱԲԻ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

Ձարին Բեդիսպարի լոհանոցին պատերը ու ձեղունները սեւ մարմարէն շինուած են, թանկագին զարդերով ծածկուած, խոհանոցին սպասները հաստ ոսկիէ են, կատարինէ Ձարուհին ժամանակէն միացած: Անոնց դրամական արժէքն անհաշիւալի է. սաներ կան առ նուազն 5000 ոսկի արժողութեամբ: Խոհանոցին պաշտօնականութիւնն է 267: Խոհարարապետը իշխանի մը չափ թոշակ կը ստանայ:

1903ին Ամերիկայի Ս. Լուի քաղաքին մէջ Միջազգային ցուցահանդէս մը տեղի պիտի ունենայ, ուր օգնաւորական մրցումին վերաբերեալ բոլոր գործիքները եւ օգտաբերիչները ի ցոյց պիտի դրուին: 200000 տոլար մրցանակ մը պիտի տրուի ամենալաւ զեկաւոր օգտաբերիչին:

Նիւ. Եօքսի սակարանին մէջ անցեալները միջնորդի թափուր աթոռ մը ծախուեցաւ 70000 տոլարի, յետոյ ուրիշ մը 80000 տոլարի: Այս աթոռը 33 տարի առաջ միայն 400 տոլարի գնուած է եղեր: Այլ մարդ կրնայ գարափար կազմել թէ 38—40 տարի ի վեր Միացեալ Նահանգաց տնտեսական վիճակը ոչ չափ յառաջդրեալ է:

Անշահահաս ազգիկներ զիսէ հանող եւ կրօնական բարեպաշտութեան զիմակին տակ անխոստովանելի արարքներու յորդորող երկու ամերիկացիներ, այդ եւ կին. որոնք Լոնտոնի մէջ կը շահատակէին ժամանակէ մը ի վեր, ձերբակալուելով դատապարտուեցան, այլը 15 տարուան, իսկ կինը 7 տարուան տաժանակիր աշխատութեան:

Վերջերս Արեւելեան Ափրիկէի մէջ Արեւելեան ցեղ մը յարձակելով Անգլիացուց թեւաբոկութեան տակ գտնուող ցեղի մը վրայ Արիւտա երկրին մէջ, 80 հոգի սպաննեց եւ ասոնց մարմինները կտոր կտոր ընելով, առանց եփելու ձանձու թիւն, ճաշակեցին: Մինչ Անգլիա փոխանակ այս

տեսակ մարգակեր վայրենիները զբաղուելու կը խրախուսուին, ահագին զոհողութիւններ կրնէ խեղճ Պօէրիսը բնաջինջ ընելու:

Մ. Պօք, մեծանուն ուսումնական, 500 հազար ռուպի կտակած է զանազան բարեգործական նպատակներու: 500,000 ռուպի ալ կտակած է խաղաղութեան գաղափարը ծաւալելու համար աշխարհի մէջ: Մ. Պօք պաշտօն կը յանձնէ իր գրեկին՝ Պէրիս խաղաղութեան Մասնախումբին հետ աշխատել խաղաղութեան գաղափարը ծաւալելու:

Թուրքոյ արդի երկաթեայ գիծերուն ցանկը.

Ա. Մաս, Անասուլի գիծ	Բիլլիոն
Հայտարար-Փաշա-Իզմիտ	91
Իզմիտ-Էնկիր	485
Էնկիր-Էրզրում	414
	1,020
Բ. Մաս, Այսքընի գիծ	
Իզմիտ-Այսքըն-Տիւրք	376
Մասնաճիւղեր	139
	515
Գ. Մաս, Գաւապալի գիծ	
Իզմիտ-Գաւապալ-Այաշէհ	108
Այաշէհ-Սիւս-Գարա-Սար	252
Սիւս եւ միացման գիծ	95
	515
Դ. Մաս, Պերուր Դաւանալիսի գիծ	
Պէրուր-Դաւանալիս	155
Դաւանալիս-Հորան	103
Ա. քեւ-Դաւանալիս	253
	511
Եւֆրատ-Երուսաղէմ	86
Մէլիտին-Ատանա	67
Մուսուր-Պրուս	41
Համագումար 2,755 քիլոմէթր. եթէ Պաղատի մեծ գիծն ալ աւարտի, Անատոլիոյ մէջ ամբողջ երկաթեայ գիծերուն երկայնութիւնը պիտի հասնի 5,300 քիլոմէթրի: Այս հաշուէն դուրս է Հիւսիսային երկաթուղին:	

Բիլլիոն

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիմանալք թէ Տ. Մանթաշեանց յառաջիկայ փետրուարին Բարիկ պիտի հասնի, ուր իր ծախքովը կառուցուելիք Հայկական եկեղեցւոյ շինութիւնը սկսիլ պիտի տայ:

— Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի հասոյթներուն անբաւականութեան պատճառաւ պաշտօնեաներու մէկ քանի ամսեայ թուականները չեն վճարուած:

— Պատրիարք Օրմանեանի մայրը՝ Տիկին Եղիսաբէթ Օրմանեան անցեալ օր մեռաւ: Հանգուցեալը տասը զաւակներ ունեցած է որոնց հինգը ողջ են: Չորեքշաբթի օր յուլարկաւորութիւնը կատարուեցաւ Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, ի ներկայութեան բազմաթիւ եպիսկոպոսներու:

— «Վէսթը» հայ դերասանական խումբը՝ որ ասկէ առաջ մտադիր էր Գոնսթանցա երթալով ձմեռուան մնացեալ մասը հոն անցնել, մեզ անձանօթ պատճառաւ իր ծրագիրը փոխեց և անցեալ չորեքշաբթի օր հասկէ Պուր-

կազ մեկնեցաւ, ուր քանի մը ներկայացումներ տալէ յետոյ Ֆիլիպպիտի անցնի:

— Ամսոյ սկիզբէն սկսեալ Բարիկ մէջ հաստատուած է Հար-Ունք անունով քաղաքական, ելեւտական, ընկերական, եւ գործակալութիւն մը, որ բացի եւրոպական երկիրներէ, մասնաւորապէս կը դրաղի նաեւ Ա. Եւրեան երկիրներով:

Այս գործակալութիւնը, ինչպէս անունով տեսնուի, չափ մը լեզուներէ թղթակցութիւններ կը զրկէ իր բաժանորդներուն, ինչպէս հայերէս համար ալ հայերէն ճիշդ մը հաստատուած է, որոնք տրանսլիտէ և Տ. Մէլիք Ս. Գաւթի բէկ:

— Հայաստանի որբանոցներու յունկոյ և փետրվար ամսականները Պատրիարքարանը չի կրցաւ զրկել անցեալ շաբթու, Նպաստից անուկը բաւականաչափ գումար չգտնուելուն պատճառաւ: Եթէ այս երկու ամսականներն ալ զրկուին, ալ պիտի դադարի նպատի առաքումը այն որբանոցներուն, որոնք, ըստ վերջին որոշման, մարտին պիտի զոհուին, իրենց քառամեայ պայմանագրովը ցամաք ըլլալով:

— Տիգրանակերտէն 13 որբեր Պաղատի զրկուած էին ասկէ առաջ և հոն մարդասիրաբար որդեգրուած: Այս տեղում Պոլսոյ թերթերէն կիմանալք թէ այդ որբերը լքուած են ու մէկ կողմէ Տիգրանակերտ կը զրկուին:

Ցաւալի է որ Պաղատի զգայինը չեն հաճած գոնէ այդ 13 որբերը ժամանակ մը պատսպարել, մինչդեռ այդ տեղի Հայոց նիւթական վիճակը շատ տեղերու բաղդատմամբ նախանձելի է կըսեն:

— Կ Պոլսէն կը հեռագրեն ֆրանսական թերթերու թէ Մուշի գաւառին մէջ երկու հայ խումբեր երեւան եկած են, Այս խումբերէ մին թուրքերու հետ կռուելով, անոնցմէ սպայ մը և երկուս պայ մը սպաննած ու զինակիր ոստիկան մըն ալ վերստնուած է:

— Արմէնիայի մէջ կը կարգանք թէ բարեկիցատակ Աստուածատուր Ջուլի կտակին տրամադրութիւնները պիտի սկսին գործադրուել մայիս 1էն: Առայժմ երկու աւստրալիացի հայ ուսանողներ պիտի զրկուին Եւրոպա արհեստական մասնագիտութիւն սորվելու և որոնց իւրաքանչիւրին 2,000 ֆրանք տարեկան պիտի յատկանայ: Իսկ երբ կտակուած գումարին տոկոսը բաւէ վեց ուսանողներու, այն ատեն Պատրիարքարանը թուրքոյ Հայերէն պիտի ընտրէ վեց ուսանողներէն երկուքը:

